Ծանոթություն.— *Թոքր-ը Թեոդորոսի գավառական սղված ձևերից մեկն է (Թեոդոր-Թոդր-Թոթր):*

*2. Չորրորդ տողում հիշատակվող* Պանարան-*ը, որ ունեցել է չորս մասունք, թեև ինչ նյութից շինված լինելու մասին ոչինչ չի գրված, բայց նկատի առնելով այն ամենը, ինչ հասել է մինչև մեր օրերը, կարող ենք պնդել, որ մասունքների պահարանները, մանավանդ նրանք, որոնք հատկապես հիշատակված են վիմական արձանագրությունների մեջ, միշտ արծաթից են շինվել՝ հայկական գեղեցիկ փորագրությամբ:*

*Այդպիսի պահարանների և մասնատուփերի մասին հիշատակություններ կան Սանահնի մի քանի այլ արձանագրությունների մեջ ևս:*

Տարընթերցում.— *1.* Ջալ, *որից արտագրելով նաև* Ղրիմ *և* Վիմ *թվականը կարդացել են* **ՉԹ (=1260)***:*

*2. Չորրորդ տողում* Ջալ Դ *թվականը բաց է թողել:*

*3.* Ջալ, Ղրիմ *7 և 8 տողերի* Կարապետին, Նահապետին, Թոքրին, *բառերը չունեն:*

## 125. Գրատան նախագավթի հր կամարի գլխին ներսից

*ԺԳ դարի երկրորդ կես*

Հրատարակված է՝ Ջալ 34—35

1 *Կամաւն Այ, ես՝ Մոնթ եւ ամուսին Մամախաթուն միաբանեցաք*
2 *սբ Անծաննիս, տվաք Ծ դահեկան: Հայրս Յոհաննէս եւ միաբանք*
3 *ավին մեզ Յոհան Ոսկէբէրանի տաւնին զամէն էկէղէցիքս պատարագել զՔս:*
4 *Ով խաբանէ՝ մեր մե-*
5 *ղացն տէր է:*

Տարընթերցում.— Մամախաթուն Ջալ *կարդացել է* Խաթուն:

## 126. Նույն նախագավթի հր պատին, պատուհանի կողքին

(Լուս. № 79)

**Հ ՉԺՁ Մ 1267**

Հրատարակված է՝ Ջալ 34, Ղրիմ 63, Վիմ 110



*Նկ. 79. Արձ. № 126:*

1 **ՉԺՁ:**
2 *Կամաւն Այ, ես՝ Մխիթար աշա-*
3 *կերտ սբ Անծաննիս էտու կազ-*
4 *մել զպահարանս Բ սբ նշանաւ:*
5 *Հայրս Կիրակոս եւ միաբանքս տա-*
6 *ւաք զամէն եկեղեցիքս պատ-*
7 *արագ՝ զբարէկենդան կիրակէն*
8 *սբ Սա . . . յ:*

Ծանոթություն.— *Վերջին տողի շարունակության վրա քարն ընկած է:* Ջալ *վերջին բառը կարդացել է* Սարգսի *և*